

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի  
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց



ՆՈՐ ՇՐՋԱՆ — ԹԻԻ Դ

ՅՈՒՆԻՍ 1900

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1. Խմբագրական. —	Էջ
Մեր Եկեղեցւոյ Պաշտօնական Լեզուն .	97
2. Առանդոսքին Հայաստանեայց Եկեղեցւոյ . —	
Առաքելոսքին Սրբոյն Բարբառոյնի .	107
3. Դարոյ . — Ծոյոսքին .	114
4. Առաքելա՛յնոսքին Հայաստանեայց Եկեղեցւոյ .	120
5. Կրօնական Դասաւանդոսքին .	124
6. Խրատականք Մարկոսի Աւելոյնի .	126

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն  
սեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանկ,  
վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Քրանկ քոթասարա .

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան  
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել  
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

# Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա Մ Ս Ա Ք Ե Ր Ք

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն Ե և Ա Ս Տ ՈՒ Ա Մ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ Ե Ա Ռ Ն Տ Ե Ա Ռ Ն Մ Կ Ր Տ Չ Ի

Մ ր ք ա զ ն ա գ ոյ ն Կ ա ր թ ուղ ի կ ոս ի Ա մ ե ն ա յ ն Հ ա յ ոց

Թ Ի Ի 4

Ն Ո Ր Շ Ր Ձ Ա Ն

Յ ՈՒԼԻՍ 1900

### Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Մ Ե Ր Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Լ Ե Ջ ՈՒ Ն

Քրիստոնէական ամենատարրական սկզբունքը կը պահանջէ որ իւրաքանչիւր հաւատացեալ հասկանայ իւր ազօթքի լեզուն. այսինքն, այնպէս ազօթէ առ Աստուած ինչպէս պիտի խօսէր մի մեծարոյ անձին, մի թաղաւորի կամ իշխանի հետ, յորմէ մի մեծ շնորհ եւ բարիք կը թախանձէ եւ կը սպասէ, կամ որում երախտապարտ է արդէն ստացած մեծամեծ բարեաց համար: Մեր Փրկչի սահմանեալ կանոնն է. «Յորժաւ կայցէք յազօթս, մի՛ շատախօսք լինիք իբրեւ գնեթանոսան. զի համարին թէ՛ ՚ի թազում խօսից իւրեանց լսելի լինիցին. արդ մի նմանիցէք նոցա. զի գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչչև ձեր խնդրեալ ինչ իցէ ՚ի նմանէ»: Աստուած մեր ազօթքին կարօտ չէ, նա գիտէ թէ ի՛նչ բաներ պէտք են իւր արարածոց, եւ նոցա պէտքեր կրնայ մատակարարել ինչպէս եւ երբ յարմար դատի: Նա միայն կ'ուզէ որ բանական մարդիկ որք հողուով մտքով եւ լեզուաւ այնքան գերադաս են միւս բոլոր արարածներէն՝ մտքով բարձրանան առ Աստուած եւ իւրեանց իրական

խնդրուածն իբր թէ անձամբ՝ իւրեանց հասկանալի լեզուա-  
ներկայացնեն . եւ խօսին Աստուծոյ հետ ինչ որ իրապէս  
կրղզան եւ պէտք է խօսին :

Դժբախտաբար մեր ժողովրդեան մեծամասնութեան հա-  
մար աղօթելու այս վեհ եւ էական պայմանը կրպակատի .  
չատեր կ'աղօթեն առանց հասկանալու արտասանած աղօթքի  
միտքն . կամ սրբազան պաշտամանց ներկայ կրգտնուին  
առանց իսկապէս մասնակցելու , վասն զի չգիտեն կամ քաջ  
չգիտեն այն լեզուն որով այդ պաշտամունք կրկատարուին :  
Մեր Եկեղեցւոյ պաշտօնական լեզուն շատ'երու դժուար հաս-  
կանալի , իսկ ոմանց՝ բարբոլին անհասկանալի է : Այս  
թերութիւն կամ տգիտութիւն ընտկան հետեւեանքն է այն  
արկածներուն որոց հանդիպած է մեր ազգն դարերէ 'ի վեր . 'ի  
հայրենիաց տարադրեալ՝ հեռուոր օտար երկրաց եւ ազգաց  
մէջ ընտկուող հայ գաղթականք ստիպուած են իւրեանց  
չբջալայրի պարագայից յարմարիլ լեզուաւ որպէս եւ 'այլ  
ամենայն իւրք : Հետեւաբար ոմանք կամ բարբոլին լքած  
են իւրեանց սեփական բարբառ կամ մասամբ մոռացած կամ  
տեղական լեզուներէն բառեր ու ոճեր փոխ առնելով իւ-  
րեանց մայրենի լեզուն ազաւաղած են . եւ միայն մեր Եկե-  
ղեցւոյ վայրական ինամք ու հովանաւորութիւնն է որ հայ  
լեզուի իսպառ մոռացումն ու ջնջումն արգելած է : Գրա-  
բարեան եւ աշխարհ-արարեան վէճեր մեզ չեն հետաքրքրեր .  
մեր Եկեղեցին այդպիսի կուսակցութիւններ չի ճանաչեր .  
նորա համար միակ կարեւոր կէտն այն է որ իւր զաւակունք  
ազգային Եկեղեցւոյ միութիւն պահպանեն մի միայն մէկ  
լեզուի կամ բարբառի գործածութեամբ 'ի սրբազան պաշ-  
տամունս . եւ այս ուղղութեամբ 'ի սկզբանէ անտի հովուած  
է իւր հօտն , բողո՛ւմ արկած սլից գարուց մէջ յաջողապէս  
պահպանած է մեր ազգի միութեան այդ միակ կապն , եւ  
առաջնորդած է զմեզ 'ի նաւահանգիստն բարութեան :  
Փամանակ առ փամանակ մեր եկեղեցւոյ հայրապետք առիթ  
ունեցած են հաստատելու եւ շեշտելու , — ինչպէս որ  
վերջերս մեր ներկայ վեհ . Հայրապետ բայարձակապէս  
հաստատեց , — թէ գրաբառն է մեր Եկեղեցւոյ ընդունուած  
միակ պաշտօնական լեզուն : Աղօթից եւ ընթերցուածոց  
այլ եւ այլ մասերն կրնան երբեմն քարոզի ձեւով իրրու-  
խրատ ու կրթութիւն թարգմանուիլ տեղական բարբառով  
եւ մինչեւ իսկ 'ի հարկին օտար լեզուաւ , բայց պաշտօ-  
նապէս կատարուած աղօթք եւ պաշտամունք պէտք է ան-

պատճառ մեր Եկեղեցւոյ պաշտօնական լեզուաւ կատարել : եթէ իսկզբանէ անտի մինչեւ զայսօր անկարելի եղած է մեր Եկեղեցւոյ պաշտօնական լեզուն փոխել եւ ժողովրդեան ամեն դասակարգին հասկանալի բարբառով կատարել զարբազան պաշտամունս , ամեն խելացի եւ մտածող հայու համար պարզ է որ մի այդպիսի փոփոխութեան ձեռնարկելն այժմ կամ յետայսու՝ պիտի լինի « ընդդէմ խթանի աքացել » . մեր եկեղեցական լեզուի դարաւոր նուիրագործումն եւ մեր ազգի օր ըստ օրէ աւելի վարատեալ եւ վատթարացեալ դրութիւն՝ որ եւ է փոփոխութիւն պաշտօնական լեզուի անհնարին եւ անհաճոյ կրկացուցանէ :

Ուրեմն ի՞նչպէս պէտք է կատարել քրիստոնէական կրօնի վերոյիշեալ պահանջն որ աղօթելու լեզուն աղօթողին հասկանալի լինելն անհրաժեշտ կրճամարի :— Միակ ճանապարհն է գրաբառ լեզուի ուսումն : Անկրօն կամ անտարբեր մարդոց հետ խօսք չունինք , ոչ եւս նոցա հետ որք կրօնական նախապաշարմամբ հակառակ են Հայաստանեայց Եկեղեցւոյն . մեր խօսքը կ'ուղղեմք մեր Եկեղեցւոյ այն հարազատ զաւակաց որք 'ի բոլոր սրտէ կըսիրեն իւրեանց հոգեւոր մայրն եւ նորա օրէնքներով եւ կանոններով կըվարին իւրեանց երկրաւոր կեանքն , 'ի նմանէ կընդունին անձանի սիրտանք եւ հոգեւոր մխրթարութիւն : Նոքա լաւ կրճատկանան մեր եկեղեցական լեզուի գիտութեան կարեւորութիւնն , եւ եթէ ինքեանք իսկ առիթ ունեցած չեն մանկութեան ժամանակ ուսանելու , անշուշտ կրճատկանան որ ներկայ ժամանակի անտարբերութեան եւ անկրօնութեան հանդէպ՝ իւրեանց զաւակներ մայրենի Եկեղեցւոյ ազդեցութեան ներքոյ պահելու ամենազօրաւոր միջոցներէն մին է՝ գրաբառ նոցա սորվեցնելով կամ սորվեցնել տալով՝ Եկեղեցւոյ աղօթքներն ու երգերն հասկանալի դարձնել նոցա մատաղ մտաց համար , եւ այդու մեր սուրբ կրօնի կենդանութիւնը վառ պահել 'ի սիրտո նոցա : Փանի որ մեր խօսքը կ'ուղղեմք մի միայն հայհաւատացեալ քրիստոնէից , եկեղեցական լեզուի ուսման կարեւորութեան վերայ այլ եւս ճառելն աւելորդ է . նոքա քաջ գիտեն եւ տարակոյս չունին այդ մասին : Ուստի մի քանի գործնական առաջարկութիւններ կ'ուղղեմք ներկայացնել մեր ընթերցողաց , որ բազմամեայ վարժապետական փորձառութեան վերայ հիմնեալ են , եւ նոցա դիւրութեամբ եւ օգտակարութեամբ գործադրելի լինելն անհերքելի կըթուի մեզ :

Այս դրութեան համեմատ հայերէն (գրոց) լեզուի դասն ամենասերտ առնչութիւն ունի կրօնի դասի հետ, եւ թէ դպրոցական ժամանակն խնայողութեամբ դործածելու համար, եւ թէ այդ երկու քոյր առարկայք համընթաց եւ օգտակար կերպիւ աւանդելու համար, կ'առաջարկեմք որ գրաբառի դասն ըստ կարի կրօնագիտութեան հետ միասին աւանդուի: Բայց դժբախտաբար այժմեան հայ դպրոցաց մէջ ոչինչ առարկայ այնքան բարձի թողի եղած է որքան կրօնի ուսումն: Ախալ դրութեամբ իմն դպրոցի վարչութիւնն ինքզինքն անպատասխանատու կրկացուցանէ կրօնի դասաւանդութեան մասին, հոգեւորականաց պարտքն է, ասելով, նոքա պիտի գան կրօնի ուսում աւանդեն: Նախ՝ մանկավարժական տարրական սկզբանց հակառակ է որ եւ իցէ մի ուսման առարկայ յանձնել դպրոցէն դուրս գտնուող՝ եւ բնդ հանրապէս մանկավարժական գրութեան անսեղեակ մի մարդոյ, լինի նա քահանայ կամ վարդապետ կամ եպիսկոպոս, առանց հետամուտ լինելու թէ նորա գործունէութիւն ի՛նչ արդիւնք ունի: Կրօնագիտութեան դասատուն նոյնքան վարժապետ լինելու է բառի բուն նշանակութեամբն որքան թուաբանութեան կամ բնագիտութեան կամ օտար լեզուաց վարժապետն: Հարկաւ շատ վայելուչ է որ հոգեւորականք ձայն եւ իրաւունք ունենան առաջարկելու թէ այս ինչ կամ այն ինչ կրօնական առարկայ այս կամ այն ուղղութեամբ աւանդելու է դպրոցաց մէջ. սակայն աւանդելու իսկական պաշտօնը վարժապետի գործ եւ, լինի նա աշխարհական կամ հոգեւորական: Ուստի կրճետելի որ մի վարժապետի գրելխաւոր յատկութիւններէն մին եւս բարեպաշտ եւ հաւատացեալ քրիստոնէայ լինելն է. քանզի ով որ ինքնին բարեպաշտութիւն եւ հաւատք չունի, չի կրնար այլոց բարեպաշտութիւն եւ հաւատք ներշնչել. եւ ոչ թէ միայն կրօնուսուցչ վարժապետէն կը պահանջուի այս յատկութիւն, այլ նաեւ միւս աշխարհային համարուած առարկայից գասատուններէն: Թուաբանութեան, բնապատմութեան եւ լեզուագիտութեան դասատուն կարէ իւր չափով բարեպաշտութիւն եւ հաւատք ներշնչել իւր աշակերտին, որպէս կարէ հակառակը գործել եւ աշակերտի հոգւոյն աստուածսիրութեան կայծեր շիջուցանել, բարեպաշտութեան նորաբողոք ծիւղերը խլել կործանել: Ուստի ամեն ծնող պէտք է համոզուած լինի որ անկրօն կամ թերահաւատ եւ անտարբեր մարդ մի իւր զաւակին դասատու լինելու ար-

ժանի չէ, ինչքան ուրիշ մտաւոր յատկութիւններ եւս ունենայ այդ անձն . իւր զաւակն հոգւով ու մտքով կ'ապա-  
կանէ եւ բարոյապէս կրօնականնէ անհաւաստ գաստառն :

Այս հոգեւոր յատկութիւններ մասնաւոր կերպիւ կրպա-  
հանջուին հայերէն լեզուի վարժապետէն , որում ըստ մեր  
կարծեաց կրօնի գաստաւանդութիւն , գէթ մասամբ , յանձնե-  
լու է : Ներկայ դարուս մէջ երբ զպրօցաց մէջ , եւ մասնա-  
ւորապէս հայ զպրօցաց մէջ , բաւմաթիւ առարկայներ եւ մի  
քանի լեզուներ սորլեցնելու պէտքն օր ըստ օրէ աւելի  
անհրաժեշտ կը դառնայ , զպրօցական ժամանակը ինայտղու-  
թեամբ գործ ածելու է . եւ ըստ մեր կարծեաց ամենամեծ  
ինայտղութիւնը գործ գրած կըլինիմք եթէ հայերէնի  
(մասնաւորապէս գրաբառի) ուսումն կրօնական գասի հետ  
միացնենք : Մեր ազգի գրականութիւնն եւս , որոյ մեծա-  
գոյն եւ ընտրելագոյն մասն կրօնական է՝ կրպահանջէ զայս :  
Հին հայ զպրօցաց գրութիւն՝ ըստ որում Ս. Գիրք եւ կրօ-  
նական մատեանք մի զպրօցի վերաւոր գասագրքեր կըկազ-  
մէին , բոլորովին միակողմանի լինելուն համար արգարեւ  
յանձնարարելի չէ : Սակայն այդ հին գրութեան ոգին բարի  
եւ ողջամիտ էր : Եղանակին հետ ոգին պէտք չէ խոտել եւ  
խոպառ մերժել , այլ լաւագոյն եղանակաւ իրագործել այդ  
վսեմ գաղափար : Հոռոմայեցոց եւ յունաց հին հեթանո-  
սական գրուածներ մինչեւ ցայսօր Եւրոպիոյ մէջ կ'ուսում-  
նասիրուին , եւ արդի եւրոպական քաղաքակրթութեան ,  
լեզուի զարգացման եւ գրականութեան վերաւոր առաջ-  
նորդութիւն ընծայած են . մի՞թէ խաւարամիտ համարուե-  
լու ենք եթէ առաջարկենք որ մեր ազգի հին կրօնական  
գրուածներ , որ մինչեւ ցայսօր ի սրբազան պաշտամունս  
մեր կենդանի մնացած են , ուսումնասիրուին եւ զպրօցաց  
մէջ իբրեւ գասագիրք գործ ածուին , քերականական բա-  
ցատրութեանց հետ կրօնական եւ աստուածաբանական մեկ-  
նութիւններն եւս աւանդուին : Մի՞թէ մեր շարականաց եւ  
եկեղեցական երգոց մէջ պակաս բանաստեղծական ոգի կը-  
տիրէ քան թէ ուրիշ ազգաց բանաստեղծական գրուածոց  
մէջ : Մի՞թէ Ս. Գրոց ահամար պատմութիւնք եւ նկարա-  
գրութիւնք պակաս հրահանգիչ եւ շինիչ են քան թէ որ  
եւ իցէ ուրիշ գրականութիւն : Կարելի չէ երեւակայել որ  
եւ է մի կրթութիւն որ աւելի աղնուացուցիչ եւ բարոյա-  
ցուցիչ լինի քան թէ մեր Եկեղեցոյ ժամագրոց աղօթք-  
ներն , քարոզներն , սաղմոսներն կարգալ թարգմանել եւ  
միանգամայն աղօթել : Սակայն տգիտութիւն եւ նա-

խապաշարում արգելք եղած են յաւուրս մեր հայ մանկաւոյ կրթութեան այս կարեւոր ճիւղն մշակելուն . եւ մեր « լուսամիտ » եւ « ինտէլիգէնտ » դասակարգը բոլոր եռանդով կ'աշխատի հայ ժողովուրդը կրօնի կապանքներէն « ազատել » : Եթէ այս նոր « լուսաւորիչներ » սերնդեամբ եւ անուամբ հեթանոս ծնած լինէին՝ կամ մի ուրիշ ոչ—քրիստոնէական կրօնի պատկանէին , յայնժամ կարծեմք պիտի ճանաչէին հայ—քրիստոնէական գրականութեան յարգն . յայնժամ պիտի թնդային նոցա ֆիլալներ եւ ընկերութեանց ժողովասրահներ Նորասեղծեալի , Այստ անձառի , Լոյս գուարթի երգերով եւ Դաւթեան սաղմոսերգութեամբ . յայնժամ պիտի հիսնային այն գեղեցիկ շարականաց , սաղմոսաց , եւ ընթերցուածոց վերայ , որոց բանաստեղծական վսեմութիւն , շինիչ եւ ազնուացուցիչ եւ փրկարար յատկութիւնները տեսնելու անկարող են այժմ , վասն զի քրիստոնեայ ծնուած լինելու եւ անտարբեր ու անհաւատ քրիստոնեայ մեծցած լինելու դժբախտութիւնն ունեցած են . եւ լուսամիտ ու քաղաքակիրթ երեւնալու համար աչքերնին կըբոցեն յաւիտեանական ճշմարտութեանց վերայ . ինչ սր կրօնի եւ աստուածգիտութեան տիպ կըկրէ , իրենցմէ եւ իւրեանց չըջանէն կըհեռացնեն կամ հեռացնել կըջանան :

Դառնամք այժմ մեր առաջարկութեան : Վերոյիշեալ դպրոցաց միոյն մէջ հայերէն (գրաբառ) եւ կրօնագիտութիւն հետեւեալ կերպիւ կ'աւանդուէր :—Դպրոցն վեց եւ երբեմն եօթն դասարաններէ կըբաղկանար : Առաջին եւ երկրորդ դասարանաց մէջ , որ եօթնէն մինչեւ տասն տարեկան մանուկներէ կազմուած էին , ամենատարրական կրթութիւն կըտրուէր : Հայերէն աշխարհարաւս պարզ կարգալ եւ հասկանալ եւ խօսելէ զտո , Տէրունական աղօթքն , Լցալ առաւօտն չորս տուն սաղմոսն , Երկիրս պակեմի՛ ֆեզ Տեր Աստուած մեր առաւօտեան քարոզն , Հասեալցն 'ի ժա՛ւ երեկոյիս երեկոյեան քարոզն , եւ մի քանի ուրիշ համառօտ աղօթքներ եւ սրբերգութիւնք անպիւր կըտրվէին : Մանուկներն առանց շատ դժուարութեան այս աղօթքներ գոց կըսերայէին , վասն զի արդէն ամեն առաւօտ եւ երեկոյ դպրոցի բոլոր աշակերտք եւ ուսուցիչք համախմբեալ՝ զայնս կ'երգէին եւ կ'աղօթէին : Իսկ դասարանի մէջ ուսուցիչն անհատաբար իւրաքանչիւր աշակերտի սովորել կուտար եւ մեկնութիւնն ըստ կարի կըհասկացնէր :

Երբ որդի դասարանի մէջ շարաթական երեք ժամ քերականութիւն կ'աւանդուէր առանց դասագրքի, այլ ըստ Բագրատունւոյ ուղղութեան: Մէկ տարուայ մէջ քերականութեան առաջին մասն, այսինքն, անուանց եւ դերանուանց հոլովմունք, գլխաւոր բայից լծորդութիւնք եւ միւս մասանց բանի որպիսութիւնք, համասօտ կերպիւ կ'աւանդուէին, յաճախ օրինակներ բերելով աշակերտաց արգէն ծանօթ աղօթքներէն եւ երգերէն եւ իրրեւ դասագիրք գործածուած աէրունական առակներէն: Այս դասարանի մէջ Աւետարանն իրրեւ կրօնի դասագիրք գործ կ'ածուէր, եւ շարաթական երեք կամ չորս անգամ աէրունական առակներն որոշ կարգաւ կը կարդացուէին եւ կը թարգմանուէին՝ հարկ եղած ժամանակ աշակերտաց արգէն ծանօթ քերականական կանոնին ակնարկելով: Այս նախապատարաստական ընթերցումէն զինի, վարժապետը կը բացատրէր իւրաքանչիւր առակի բարոյական կամ խորհրդաւոր նշանակութիւն, որ յաջորդ դասին աշակերտաց կողմէ պիտի կրկնուէր, եւ երբեմն իրրեւ աշխարհաբառ շարադրութեան նիւթ՝ զպրօցէ դուրս պիտի գրուէր եւ վարժապետին ներկայացուէր: Գպրոցին մէջ ընդունուած միակ քերականութիւնը Բագրատունւոյ Տարերքն էր, այնպէս որ տարբեր քերականական բացատրութեանց եւ շիւթութեան երկիւղ չէր կրնար լինել:

Մանկական միաքն ու յիշողութիւնը որպէս եւ գրական ճաշակն ու ըմբռնումն զարգացնելու համար ընտիր ոտանաւոր գրուածներ անգիր սերտելն իրրեւ լաւագոյն միջոցներէն մին համարուած է: Մեր ազգի գրականութեան մէջ աւելի ընտիր եւ մեր ժողովրդեան աւօրեայ պիտոյից համար աւելի պիտանի եւ գործածական քերթուածք քան զներսևտեան երգս՝ կարելի չէ գտնել: Ուստի երբ որդի դասարանի աշակերտք շարաթական մի քանի տուն Առաօտ ըռսոյ, Այսօր անձառ, Արարչակաճ, Նորաստեղծեալ, կամ Նայեաց սիրտի երգերէն, կամ նոյն իսկ մի շարական անգիր կ'ուսանէին: Ընդհանուր սովորութիւն էր որ անգիր դասը նշանակելէն յառաջ՝ աշակերտք դասարանի մէջ նախապէս կը կարդային եւ կը թարգմանէին ուսուցչի օգնութեամբ, որ հարկ եղած քերականական լուծումն տալով եւ խրթնութիւնները պարզելով՝ անգիր սերտելն կը բարացնէր եւ օգտակար կը կացուցանէր: Երբեմն նաեւ փոփոխութեան համար նորագոյն հեղինակաց եւ ոչ—կրօնական նիւթոց

վերայ գրուած քերթուածներ, (օրինակի համար Մխիթարեան հարց քերթուածներէն, կամ Գուրեանի ժողովածոյէն) սոյն նպատակին կրժատայէին: Չորրորդ դասարանի աշակերտք՝ երրորդի մէջ սկսած ընթացքն յառաջ կրթանէին. քերականութեան առաջին մասն հիմնապէս սորվելէն յետոյ՝ պարզ շարագրութեան օրէնքները կ'ուսանէին, միշտ շարունակելով՝ իւրեանց կարգացած եւ սովորած տէրունական առակներէն, աղօթքներէն, երգերէն օրինակներ յառաջ բերել: Երգեր եւ շարականներ, երբեմն եւս Գործք Առաքելոցէն գեղեյիկ հատուածներ, կը շարունակէին զոյ սերտել: Գարագաշեանի ուղղութեամբ հասուածներ գրաբառէ աշխարհաբառ, եւ աշխարհաբառէ գրաբառ կը թարգմանէին: Իբրեւ զասպիրք կ'օրնի՝ Գործք Առաքելոյը գործ կ'ածուէր, որ յընթացս միամեայ դասուանդութեան ծայրէ՝ ի ծայր կը կարգացուէր ամենայն մանրամասնութեամբ. քերականական եւ լեզուաբանական բացատրութիւններէ զատ, իբրեւ պատմութիւն ամեն գէպք եւ նկարագրութիւն՝ ի Գործք Առաքելոց կ'ուսանէին աշակերտք: Հինգերորդ եւ Վեցերորդ դասարանաց մէջ քերականութեան դասն չափաւորուած էր այլ եւս. եւ պատահական լուծմունքէ եւ ակնարկութիւններէ զատ, քերականութիւնը շատ քիչ անգամ գործ կ'ածուէր: Հին կտակարանի պատմութիւն քաղուածօրէն եւ Նոր կտակարանի պատմութիւնն ամբողջովին (չորից աւետարանաց համաձայնութիւն հանշեքձ Գործոց Առաքելոց) այս երկու դասարանաց մէջ կ'աւանդուէր: Արդէն Չորրորդ դասարանի մէջ սկսեալ ազգային պատմութիւնն (որոյ հետ կցուած է հարկաւ եկեղեցական պատմութիւն) Հինգերորդի մէջ կը շարունակուէր, որ Վեցերորդի մէջ նախնեաց մատենագրաց միոյն հետեւութեամբն յառաջ կը տարուէր:

Վերոյիշեալ նկարագրութեան մէջ ոչ ուսանելեաց միւս առարկայք յիշեցինք եւ ոչ աշխարհաբառ այլ եւ այլ հրահանգներն ու կրթութիւններն: Մեր միակ նպատակն էր ցոյց տալ թէ ինչպէս կարելի է օգտակար կերպիւ եւ ժամանակի խնայողութեամբ գրաբառի եւ կրօնի դասերն միացնել: Թերեւս հետաքրքրական լինի մեր ընթերցողաց գիտնալ որ վերոյիշեալ դպրոցի մէջ աշակերտաց առանձին գործածութեան համար փոքրիկ գրադարան մի կար, որոյ մէջ կը գտնուէին Թիֆլիզի Հրատարակչական ընկերութեան բոլոր գրքերն, ռուսահայ եւ աստուծահայ

ամենէն նշանաւոր աշխարհաբառ վէպեր եւ քերթուածներ, որոյէս եւ շատ ուրիշ գուարճալի եւ օգտակար գրքեր: Գրասարանին մասնակից լինել ցանկացողք պարտաւոր էին ամսական մի փոքրիկ տուրք վճարել. եւ ուրախալի էր տեսնել որ, առաջին երկու դասարանաց աշակերտներէն զատ, բարձրագոյն դասարանաց գրեթէ բոլոր աշակերտներ գրագարանի անդամ էին եւ գրապետին բաւական գործ ու ձանձրոյթ կը պատճառէին:

Մեր նիւթէն շատ շեղած չենք լինիր եթէ յիշենք որ դպրոցի անխախտութեամբ օրէնքն էր առաւօտ եւ երեկոյ բոլոր աշակերտներն ու հայ ուսուցիչներն հաւաքելու տեսչի նախագահութեամբ աղօթել ինչպէս ակնարկուեցաւ 'ի վերոյ: Առաւօտեան կարգն էր Անուն Հօր, Լցախաւարտ (մէկ տուն Տեսուչը, միւսն աշակերտք եւ ուսուցիչք կ'արտասանէին), եր'իր պապեմք ինչ Տէր Խմբուլին, Գոհանալք զիեւ առաւօտեան աղօթքն (Տեսուչն կ'արտասանէր եւ աշակերտք Ամենը կը ճայնէին), Սուրբ Աստուած կ'երգէին, եւ երբեմն եւս Մանկունիի շարական (Չառարտոս գորհնէրգութիւնս). ապա տեսուչն դպրոցի առանձին աղօթքը կ'արտասանէր եւ Սուրբ եւ Տէր Աստուած մեր հօր կամ Առաջնորդեա մեզ աւելցնելով Հայր մերը միաշերան կ'երգէին եւ կը պրտուէին իւրաքանչիւր սք իւր դասարանն: Սովորական օրեր այս կարգ վեցէն մինչեւ տասն վայրկեան կը տեւէր: Մեծի Պահօց մէջ եթէ աշակերտք եկեղեցի գնալ չկարեւորային (եւ արդէն կիրակիէն զատ շատ քիչ անգամ կ'երթային, քանզի եկեղեցին դպրոցէն շատ հեռու էր) առաւօտեան աղօթից հետ Տէր Ամենակալը կ'արտասանէին, Տեսուչն եւ աշակերտք տուները փոփոխակի անելով:

Երեկոյեան ընթրիքէն վերջ դարձեալ աշակերտք կը հաւաքուէին եւ տեսչի առաջնորդութեամբ հետեւեալ կարգաւ կ'աղօթէին. եւ առ Աստուած, Հաւեա քս, Օրհնեսլ Տէր որ բնակեալդ, դպրոցի առանձին աղօթքն, եւ Փառք ինչ Տէր Աստուած մեր: Երբեմն եւս փոփոխութեան համար ամբողջ երեկոյեան ժամերգութիւն խոնարհեցո եւ Ապրեցո եւ այլն կրկնաւարուէր (որ տասն ու հինգ վայրկեան կը տեւէ), կամ Մեծի պահօց երեկոյեան նայեաց սիրով եւ ի իեւ հայցեմք կ'երգէին:

Իրակի օրեր բոլոր աշակերտք եւ ուսուցիչք միասին եկեղեցի կ'երթային եւ մեծ տօներուն կը խոստովանուէին կը հաղորդուէին: Ամէն կիրակի երեկոյ աշակերտք կը

հաւաքուէին դպրոցի մեծ սրահն . ուր տեսուչը կամ այլ ոմն կրօնական եւ եկեղեցական այլ եւ այլ առարկայից վերայ կըխօսէր, որ առթիւ գուրսէն եւս շատ անգամ եկողներ ունկնդիր կըլինէին : Յաւարտ ճառախօսութեան, աշակերտք եկեղեցական երգեր եւ շարականներ եւ այլն կ'երգէին եւ Փառք քնք Տէր Աստուած ով կըրհակէին իւրեանց կիրակնօրեայ դպրոցն :

Յօդուածն չափէ դուրս երկարեցաւ . բայց խնդրոյն կարեւորութիւնը ստիպեց զմեզ երկարել եւ մեզ ծանօթ մէկ օրինակաւ ցոյց տալ թէ ի՞նչպէս կարելի է կրօնի եւ գրաբառի ուսումն օգտակար կերպիւ աւանդել : Բայց անշուշտ ոմանք պիտի հարցնեն . «կարելի՞ բան է նիւթական դարուս մէջ այսքան կրօնական կրթութիւն տալ մեր տղայոց . մի՞թէ ամենքն ալ տէրտէր վարդապետ պիտի ըլլան» :— Կարելիութեան մասին տարակոյս չկայ . տարիներէ հետէ վերոյիշեալ դպրոցն այդ դրութեամբ կառավարուած է եւ կըկառավարուի : Այդ դպրոցի նախկին աշակերտք ըստ մեծի մասին Հնդկաստանի եւ ծայրագոյն Արեւելեան երկրաց մէջ իբրեւ պարկեշտ ու պատուաւոր հայ քրիստոնեայք կ'ապրին եւ աշխարհային յաջողուածովք եւ նիւթական հարստութեամբ շատ աւելի բարձր դիրք ունին քան թէ նոքա որք ՚ի շնորհս յոռի կրթութեան կրօնն ու հոգեւորականութիւնն անդադար ծաղրել ու անարգել սորված են : Վերջին տասն տարուայ ընթացաւարտներէն միայն մէկը քահանայացած է եւ իւր հայրենեաց մէջ այս վայրկենիս նշանաւոր դիրք ունի : Այդ դպրոցի նախկին սաներէն մին, որ վերջերս Մանչէսթր եկած էր, կըպատմէր թէ Բերմանիոյ Մանդլէ քաղաքի մէջ շուրջ քսանհինգ հայեր, ըստ մեծի մասին իւր նախկին աշակերտակիցք, տարիներէ հետէ ամեն կիրակի մի փոքրիկ եկեղեցոյ մէջ զոր ունին կըհաւաքուին եւ, թէպէտ քահանայ չունին, ամենայն կանոնաւորութեամբ եւ բարեպաշտութեամբ ժամերգութիւն կըկատարեն : Ահաւասիկ պըտուղն քրիստոնէական կրթութեան :

## ԱՐԱՆՊՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏ. ԵԿԵՂԵՅԻՈՅ

### ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԲԱՐԹՈՒՂԻՄԼՈՍԻ

#### 1. Պատմական դժուարութիւնք . —

Ս. Բարթուղիմէոսի մասին կրգրէ Եւսեբիոս (ե 10) թէ մինչեւ 'ի Հնդիկս գնալով՝ քարոզեց եւ Մատթէոսի Աւետարանն երբայական լեզուաւ թողեց անդ, զոր մէկ զար վերջը Պանտենոս Աղեքսանդրիոյ հուշակաւոր աստուածաբանական դպրոցի վերակացուն իւր հնդկական ուղեւորութեան միջոցին տեսած էր: Խորենացին կ'ասէ. « Բայց վիճակեցաւ Հայոց եւ Բարթուղիմէոս Առաքեալ, որ եւ կատարեցաւ առ մեզ յԱրեւբանոս քաղաքի » (Բ 34): Այս երկու աւանդութիւններ կը միացնէ մեր Վկայաբանութիւն Սրբոյ Առաքելոյն Բարդղղոսի, որ կը պատմէ թէ յառաջագոյն 'ի Հնդիկս քարոզեց եւ ապա « գնացեալ անտի սրբոյն եհաս յերկիրն Պարթեւաց եւ Մարաց եւ Ելիմացոց . . . եւ յետոյ անցեալ գնաց 'ի Գողթն գաւառ Հայոց, եւ փութացաւ հասանել 'ի վիճակ Թագէոսի ըստ հրամանի Հոգւոյն սրբոյ »: 1

Արդարեւ շատ դժուարին է մեր ձեռքը հասած հատուկոտոր յիշատակութիւններէն կանոնաւոր պատմութիւն կազմել Առաքելոյս ուղեւորութեանց մասին: Երուսաղէմէն Հնդկաստան, մանաւանդ այն հին դարուց մէջ երբ ճամբորդութեան ներկայ գիւրութիւնները կը պակասէին, միանուագ եւ կարճ ժամանակի մէջ չէր կրնար կատարուիլ: Եստ հաւանական է որ միւս առաքելոց հետ միասին Պալեստին թողնելով՝ գնաց 'ի Միջագետս ընդ Ս. Թագէոսի եւ այլոց առաքելոց, եւ ապա Թովմասի ընկերակցութեամբ անցաւ Ասորեստան, եւ անտի քարոզելով Բաբելաստանի եւ Պարսկաստանի մէջէն ուղեւորելով եւ եկեղեցիս հաստատելով՝ 'ի վերջոյ հասաւ 'ի Հնդիկս զկնի ամաց ինչ: Հնդկաստանէն կրնար վերադառնալ եւ ըստ մեր վկայաբանութեան Պարթեւաց եւ Մարաց եւ Ելիմացոց երկրաց մէջէն անցնելով՝ 'ի Հայաստան մտնել:

(1) Սոփիքը Հայկականք, ԺԹ յորմէ գլխաւորաբար քաղուած է սոյն պատմութիւնը:

## 2. Քարոզութիւն 'ի Հնդիկս . —

Ս. Բարթոլղիմէոս Եղեմ կոչուած (այժմ անստոյգ) քաղաքի մէջ ահանատես կըլինի հնդկաց կապալաշտական արարողութեանց, զորս վկայաբանն այնպիսի կենդանի գոյներով կընկարագրէ ինչպէս զկնի երկու հազար ամաց կարելի է տեսնել այսօր իսկ: Վկայաբանութիւնը կըներկայացնէ մի մեծ հնդկական շիրջա, կամ կոոց տարեկան հանգէս, որպէս կարելի է տեսնել 'ի Հնդիկս մինչեւ ցայսօր, երբ մեծամեծ ընծայիւք եւ զոհիւք կըդիմեն 'ի գետափն կամ որեւիցէ մի նուիրական համարուած լիճ կամ առուակ, « եւ ծախս ոսկւոյ եւ արծաթոյ, եւ ահանց պատուականաց, եւ հանգերձս մեծագինս եւ պատուականս », ջուրը կըձգեն: Մի այսպիսի աղբիւր էր Ս. Բարթոլղիմէոսի տեսածն զոր ժողովրդեան սնապաշտութիւնն իբրեւ բնական շատուածոց իւրեանց եւ գիւաց կըհամարէր. եւ հնդիկ ու միկ ժողովուրդն այդ յորգահոս աղբեր փրփրալից ջրոյն պղպղակաց եւ խոխոջմանց մէջ գիւաց եւ շատուածոց աղաղակներ, սաստ ու հրաման, կըլսէին. եւ « ինքեանք զաղաղակ բարձեալ մեծաձայն եւ ուժգին գոչմամբ կարգային զանուն աղբերն իբրեւ զասուած՝ որ կարիցէ օգնել եւ պարգեւս ընդունել 'ի նմանէ »: Սրբազան Առաքելոյն միջամտութեամբն, զոր վկայաբանն՝ իւր ժամանակի ոճոյն եւ սովորութեան համեմատ բանաստեղծական գոյներով կընկարագրէ, այդ սնոտի պաշտօնը կըխանգարուի եւ հնդիկ ամբոխն հիացմամբ կըդիմէ այդ հրաշաղործ օտարին, մինչ այլք լուրը կըստարածեն շրջակայ գեղերն, որով բազմութիւնն առաւել եւս կըստուարանայ: Ս. Բարթոլղիմէոս բնականաբար կըսկսի քարոզել, եւ մասնաւորապէս իւր հետ տարած Մատթէոսի աւետարանը կըկարդայ եւ կըթարգմանէ, նոցա սնոտի կոապաշտութիւնը կըյանդիմանէ. եւ կըհամոզէ ընդունել « զքարոզութիւն սուրբ աւետարանին »: Յետ այնորիկ « իջուցեալ զնոսա 'ի ջուրն մկրտեաց, եւ լուսաւորեաց լուսով Հագւոյն սրբոյ, եւ կատարեալ զխորհրդակալս պասարագն՝ հաղորդեցոյց զնոսա կենդանաբար մարմնոյ եւ արեան որգւոյն Աստուծոյ 'ի թողութիւն մեղաց, որ է կեանք եւ կեցողիչ, եւ հաւատացողիչ սուրբ Երրորդութեանն: Եւ կացոյց անդ երիցունս . . . եւ հաստատեաց զնոսա 'ի հաւատս ճշմարտութեան »: Տարակոյս չկայ որ Ս. Բարթոլղիմէոս Ս. Թովմասի հետ միասին Հնդկաց այլ եւ այլ

գաւառներն եւս այցելեց, եւ թերեւս մասնաւորապէս իբրեւ գործակից Ս. Թովմասի՝ Մալաբար ծովափովման մէջ աշխատեցաւ, ուր, ինչպէս նախընթաց յօդուածոց մէջ յիշուած է, քրիստոնէութիւնն ամենահին ժամանակէ ՚ի վեր հաստատուած էր: Բայց զժրախտաբար մեր վկայարանութիւնը կըլուէ այս գործունէութեան մասին, եւ կըլսապի նորա վերադարձն ՚ի Հնդկաց պատմիլ:

3, Դարձ ՚ի Պարթեւս եւ Մարս, եւ Բարձրաբիւն ՚ի Գերմանիկեցոց աշխարհիւն.—

Մարաց եւ Ելիմացոց երկրաց մէջէն անցնելով, առանց առաքելական գործունէութեան, Խորին Ասորոց Բուսոր քաղաքը կրհասնի, եւ տեղւոյն հաղարապետի երկոտասանամեայ որդին կրթչիէ կամ կրվերակենդանացնէ աղօթիւք եւ ձեռնադրութեամբ յանուն Յիսուսի, որով ժողովուրդը սքանչացած՝ զսուրբ Առաքեալն իւրեանց բազկաց վերայ բարձրաձուցին, մինչ այլք զո՞ր մատուցանելու պատրաստութիւն կըտեսնէին, որպէս երբեմն լիւսարացիք Ս. Պաւլոսին զո՞ր կրմատուցանէին: Ս. Բարթեղիմէոս այս սնապաշտութիւն արգելելէն յետոյ՝ սկսաւ քարոզել, մասնաւորապէս մատթէոսեան աւետարանն իւր քարոզութեան հիմն առնելով, զոր ընդօրինակել կամ թարգմանել տալով՝ ժողովրդեան մէջ կըտարածէր: Բուսորայի մէջ բնականաբար իւր առաջին ձեռնասունք եղան հարիւրապետն, որոյ որդին բժշկած էր, եւ նորա համայն ընտանիք եւ ազգականք, զոր հանդիսաւոր կերպիւ մկրտեց: Հարիւրապետի բարի օրինակին հետեւեցան քաղաքացիներէն շատեր, որոց ազգեցութիւն հետզհետէ զօրանալով՝ քաղաքի կառուանները քանդեցին եւ թանգագին կուռքերը կործանելով՝ աղքատաց եւ կարօտերոց բաշխեցին: Ըստ առաքելական սովորութեան, Ս. Բարթեղիմէոս իւր աշակերտներէն մին երէց կամ վերակացու ձեռնադրելով՝ նորանաստատ եկեղեցին Բուսորայ նմա յանձնեց՝ եւ ինքն շարունակից իւր ուղեւորութիւն, « եւ ել գնաց յաշխարհն Գերմանիկեցոց (այսինքն, Կապադովկիա) ըստ վիճակի ընտրութեան Հոգւոյն սրբոյ »: Մայրաքաղաքին մէջ սկսաւ իւր առաքելական գործունէութիւն, քարոզեց եւ հիւանդներ բժշկեց: Թէպէտ եւ իսկզբան Գերմանիկեցոց թագաւորէն եւ իշխաններէն մեծ ընդդիմութիւն կրեց, եւ առ ժամանակ մի բանտարկուեցաւ եւ խոշտանգանաց ենթարկ-

ուեցաւ, ըսյց յետոյ ըստմաթիւ հետեւողներ ունեցաւ, զորս մկրտեց, եւ սուրբ խորհուրդներն աւանդելով նոցա, եւ առանձին երէց ձեռնադրելով նոցա համար, ինքն անցաւ Պարթեւաց երկիրն, ուր մի խումբ կրակապաշտ մոզերու հանդիպելով, որ արեգական եւ երկրիս տարերց աստուածային պաշտօն կրմատուցանէին, իւր ձեռքերը բարձրացոյց յարեւելս ընդդէմ արեգական եւ զայն խաւարեցոյց մինչեւ ցլեց ժամ առւերն : 2 Սակայն շատ քիչ յաջողութիւն գտաւ այստեղ, եւ մոզերէն միայն ութ հոգի հետեւողներ շահեց, զորս մկրտեց եւ իւր հետ տարաւ 'ի Հայս :

#### 4. Գալուս Առաքելոյն 'ի Հայս. —

Մեր վկայաբանութիւնք կ'աւեն. « Ի քսաներորդ ամի Սանատրկոյ թագաւորին եմուտ սուրբ առաքեալն Բարթուղիմէոս ըստ հրամանի Հոգւոյն սրբոյ 'ի Հայք » : Նոյն վկայագիր յայտնի կերպիւ կըլիչէ թէ Ս. Բարթուղիմէոս 'ի Հայս գնաց փոխանակ Թաղէոսի առաքելոյն, որ ինչպէս տեսանք<sup>3</sup> յամի 43 նահատակեցաւ : Սանատրկոյ թագաւորութեան սկզբնաւորութիւնն հաշուելով ոչ թէ Արգարու մեռնելէն զկնի, այլ Արարասոյ իշխան կարգուելու թուականէն, այսինքն, յամի 15, նորա թագաւորութեան 29երորդ տարին կըլինի 44, որ է միանգամայն Ս. Բարթուղիմէոսի առաքելութեան սկիզբն 'ի Հայս : 4 Նախ Հայոց Գողթն գաւառ մտնելով. « փութացաւ հասանել 'ի վիճակ Թաղէոսի ըստ հրամանի Հոգւոյն սրբոյ » : Այստեղ վկայաբանը կ'աշխատի երկոցուն առաքելոց կապակցութիւնը 'ի յայտ բերել. Ս. Բարթու-

2. Մի ուրիշ աւանդութիւն կ'աւէ՛ Ս. Բարթուղիմէոս Երուսաղէմ էն իւր հետ բերած Աստուածածնի սխալներ բարձրացոյց ընդդէմ արեգական. եւ նոյնպէս Դարբնաց քար կոչուած տեղոյն դիւական պաշտամունքն այդ պատկերի հրաշալի զօրութեամբ խանգարեց կործանեց : Սակայն նկատելի է որ մեր գլխաւոր աղբիւր եղող վկայաբանութիւն այս պատկերի մասին որ եւ է յիշատակութիւն չի առներ : Մովսէս Խորենացի եւս առ Սահակ՝ արժրունեաց նախալարն գրած Թղթոյն մէջ այն պատկերի պատմութիւնն երկարօրէն կըգրէ, զոր տես ի շարս Մատ. նախն. Վենետիկ, 1865 :

3. Եկեղեցի Հայաստանեայց, էջ 51 :

4. Շաւանթոյն այս է պատճառն որ Գաւազանագիր Վարդապետի յօրինեալ ցուցակի մէջ Ս. Բարթուղիմէոսի « ընտրութեան » Թուական՝ Քրիստոսի 44 տարին նշանակուած է, որ բաւականին կըտարբերի Հ. Ալիշանի ժամանակագրութեանն, որ Սանատրկոյ թագաւորութեան Թուականն Արգարու մեռնելէն յետոյ սկսելով՝ Ս. Բարթուղիմէոսի գալուստն 'ի Հայս 50-60 ին կըդնէ :

զիմէսս՝ Ս. Թադէոսի տեղը կը յաջորդէ : Գողթան գաւառի քրիստոնէայք ու բախութեամբ կը նդունին զառաքեալն, եւ նորահաւաններն եւս կը մկրտուին : Պարսկաստանէն իւր հետ տարած հաւատացեալ մոզերէն մի քանիսը քահանայ կը ձեռնադրէ, որոց կը յանձնէ նորահաւատ քրիստոնէից վերակացութիւնն :

Անձեւացեաց գաւառին մէջ յաջողեցաւ մի հին հայկական սնապաշտութիւն վերցնել : Անահայ եւ ուրիշ սնոտի չաստուածոց քուրմեր քարանձաւներու մէջ մեծ կրակ կը վառէին եւ քարեր ու երկաթներ իրարու զարնելով անոնի ձայներ կը ճաննէին, որոց արձագանք ընդարձակ անձաւաց մէջ կը տարածուէր եւ աւելի սարսափահար կ'աւնէր զժողովուրդն, որք դիւաց եւ ոգիներու ձայներ եւ որոտմունք լսել կը կարծէին : Այս պատճառաւ այդ տեղը կը զոչուէր Գարբնաց քար : Ս. Բարթողիմէոս աստուածային աջակցութեամբ յաջողեցաւ կուռքերը կործանել եւ քուրմերն հալածելով՝ այդ դիւային որոտմունքն զազրեցնել :

Իւր առաքելական ուղեւորութիւն յառաջ տանելով՝ Ս. Բարթողիմէոս մտաւ 'ի Հեր եւ Ջարեւանդ գաւառ Հայոց, « եւ արար նշանս եւ արուեստս 'ի վերայ հիւանդաց . . . եւ լուսաւորեաց անդ զբազումս եւ միսիթարեալ բանիւ վարդապետութեամբ սուրբ աւետարանին . . . եւ եղեալ միոյ միոյ ձեռն յանձն արար զնոսա շնորհացն Աստուծոյ » : Վկայաբանի այս վերջին խօսքերը շատ կարեւոր են իբրեւ վկայութիւն նախկին եկեղեցւոյ սովորութեան 'ի մասին մատակարարութեան Գրոշմի սուրբ խորհրդոյն, զոր մեր եկեղեցին այժմ անմիջապէս զինի մկրտութեան հայրապետական օրհնութեամբ պատրաստուած Միւռոնի սուրբ օծութեամբ կը կատարէ. իսկ յառաքելական դարու (որպէս աւանդի 'ի Գործս Առաքելոց եւ աստ) միմիայն առաքելական ձեռնադրութեամբ կը կատարուէր : Արեւելեան եկեղեցիք դիւրութեան համար, եւ վաղամեռիկ մանուկներ Ս. Գրոշմի խորհուրդէն չզրկելու համար, մկրտութեան հետ միասին կ'աւանդեն :

##### 5. Վախճանի մերոյն Բարբուղիմէոսի :—

Ս. Բարթողիմէոսի առաքելական ուղեւորութեանց այս հատուկոտոր աւանդութիւններ կարգացողը չի կարողցաւ չըզգալ, որ տարիներ տեւող այդ հեռուոր եւ տաժանելի ճանապարհորդութեանց մասին աւելի մանրամասն տե-

դեկոմբիւնք հասած չեն մեր ձեռքը : Վերի վերոյ քսան տարուայ գործունէութեան պատմութիւն կը ներկայացնեն մեզ այդ աւանդութիւնք . բայց այս քսանամեայ ժամանակի մի քանի պատահական դէպքերը միայն աւանդած են մեզ վկայարանք եւ պատմիչք : Բայց Պալեստինէն ցամաքային ճանապարհաւ ի Հնդկիս , եւ անտի Պարսից եւ Մարաց եւ Ասորեոց երկիրներ ճամբորդող , եւ մասնաւորապէս Հայոց երկրին մէջ անդադար տեղէ տեղ շրջող քարոզող մի Առաքելոյն աշխատութիւն եթէ արձանագրուած լինէր , անշուշտ Գործոց Առաքելոց երկրորդ եւ մեծագոյն հատորը պիտի ունենայինք այժմ : Այլ աւա՛ղ որ զրկուած եմք այդ պահէն . եւ կըմնայ մեզ միայն այլ եւս Ս . Բարթուղիմէոսի նահատակութիւնը յիշել , որ կատարեցաւ Հայոց Արեւբանոս կամ Ուրբխանոս քաղաքին մէջ , որ Աղբաղ գաւառի Բարնա քաղաքը կը թուի լինել : — Ոգոհի կամ Աւագունի քոյր Սանատրկոյ՝ Բարթուղիմէոսի լուրը լսելով ( թերեւս իւր ունեցած նախածանօթութեամբն քրիստոնէութեան մասին շնորհիւ Ս . Թադէոսի , ) կ'երթայ այլովք հանդերձ կըյարի սուրբ Առաքելոյն եւ հաւանօրէն կըմկրտուի : Տերենտինոս հաղարայետն , որ Սանատրուկէն զրկուած էր արքայազարմ տիկինը վերագարձնել իւր տեղը , ինքն կըհաւատայ 'ի Քրիստոս եւ կ'աչակերտի Ս . Առաքելոյն : Թագաւորն զայս լսելով , ուրիշ պաշտօնեաներ կըզրկէ եւ զսուրբ առաքեալն որպէս եւ զՈգոհի եւ զհազարայետն եւ իւրեանց հաւատացեալ ընկերներն կըտանի իւր մօտ , եւ սպանանել կըտայ : Ոմանք կ'ասեն Ս . Առաքեալն մորթեցերձ եղաւ , այլք՝ թէ խաչեցաւ : Հաւանական կըթուի Գանձատող Խաչատուր վարդապետի կարծիքն թէ .

« Բարդղիմոս յԱղբակ ընծանայ  
« Զմորժն հանեալ՝ 'ի խաչ վերանայ : »

Սակայն մեր յօդուածոյն գլխաւոր առաջնորդ եղող վկայարանութիւն կըպատմէ . « Եւ տանջեալ զուրբ առաքեալն քքօք իրրեւ ժամ մի արք վեց , եւ համարէին զնա մեռեալ , եւ քարչեցին ընկեցին զնա արտաքոյ քաղաքին » : Բայց սթափելով՝ կ'աղօթէ Ս . Թադէոսի եւ իւր եւ այլոց առաքելոց ջանիւք 'ի Հայս հաստատեալ Եկեղեցւոյն համար , եւ կըվերջացնէ ասելով . « Եւ տուր սոցա հովիւ եւ առաջնորդ , զի ծանիցեն զքեզ միայն ձյմարիտող Աստուած , եւ զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս . եւ զիս ընկալ , տէր

իմ, եւ զհաւատացեալքս 'ի քեզ պահեա » : Այս աւանդութիւնն եւս կարելի է յարմարաբար միացնել վերոյիշելոյն հետ . նախ կրտանչուի , ապա մորթեղերձ կըլինի , եւ հուսկ յետոյ կըխաչուի :

### 6 . Այցելութիւն այլոց Առաքելոց եւ Աւակերտաց .

Հայոց այս երկու լուսաւորիչ առաքեալներէն զառաջ , կըյիշուին նաեւ ուրիշ առաքեալք եւ աշակերտք Քրիստոսի որք 'ի Հայս գալով՝ քարոզած են առ ժամագէս , բայց ուրիշ երկրաց մէջ նահատակուած են : Սոցա առաջինը կըհամարուի Ս . Թովմաս , որ , ինչպէս տեսանք , կերպիւ իմն վերահսկող կարգուած էր Հայաստանեայց Եկեղեցւոյ . Քրիստոսի պատուէր գործադրելու պաշտօն նմա յանձնուած էր , եւ թերեւս իւր հնդկական ուղեւորութեանց միջոցին անձամբ եւս քարոզած է Հայոց մէջ : Վերոյիշեալ վկայաբանութիւնը ցոյց կուտայ որ Թովմաս ուշադրութեամբ կըհսկէր մեր Եկեղեցւոյ վերայ , նոյն իսկ երբ ինքն անձամբ բացակայ էր : « Եւ Թովմայի ըստ վերակայութեան ստաջնորդութեանն իւրոյ գրեալ առ նա , զի մի զանց արասցէ զնոքօք քարուղի զաւետարանն արքայութեան ('ի Հայս) » :—Միւսն համարելի է Սիմօն Կանանացի , որ Նախանձայոյց մականունն ստացած էր , եւ կրչիշուի 'ի հայ մատենագրաց ոմանց :

Ս . Պետրոս եւս որ Պոնտոսի շրջակայ երկրաց մասնաւոր առաքեալ էր , եւ իւր առաջին կաթուղիկեայ թուղթն ուղղած է առ հաւատացեալս « Որ 'ի սփիւսս Պոնտացոց , Կաղատացոց , եւ Կապադովկեցոց եւ Ասորոց եւ Բիւթանացոց » : Հայոց երկրին այսքան մերձակայ , եւ մասամբ եւս Փոքր Հայք կազմող երկրաց այցելութիւնն մեզ իրաւունք կ'ուտայ զսա եւս դասել ընդ քարոզս Բանին 'ի Հայս :—Նոյնը կարելի է ասել Ս . Յովհաննու մասին , որ մինչեւ ի Պարթեւս գնացած է , բնականաբար Հայաստանի ճանապարհաւ , եւ Ս . Անդրէասի նկատմամբ , որ հին Բիւզանդիոնի լուսաւորիչ համարուած է 'ի յունաց :—Մատաթիա եւս կրչիշուի իբրեւ այցելու Հայոց եւ շատ հաւանական է որ Ս . Պօղոս եւս այցելած է մեր հայրենիք :

Քրիստոսի աշակերտներէն կըյիշուին Յուդա մին յետ թանասնից , որ յաճախ կըչփոթուի ընդ Յուդայի Յակովբեան (այսինքն , Ս . Թագէտսի) , Լոնգինոս կամ Դուսկիբանոս հարիւրապետն , որ ախպիւ խոցեց Քրիստոսի կողն 'ի վերայ խաչին , եւ յետոյ ինքն եւս հաւատաց :

ՔԱՌԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԻ Ի ՎԵՐԱՅ  
ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂԱՑ

ԾՈՒԼՈՒԹՅՈՒՆ

(*Խօսեցեալ յազգային եկեղեցոց Հայոց Մանչեսթրի ի ջորրորդ  
Կիւրակի Մեծի Պահոց 1900 .*)

« Ի փոյն՝ մի՛ վեհերօք . հոլով եռացէք, Տեառն ծառայեցէք, յուսով խն-  
դացէք . նեղութեան համբերեցէք . աղօթից ստէպ կացէք : — Շուով . ԺԵ 11 :

**Միրեցեալքդ 'ի Քրիստոս .**

Այսօր պիտի խորհինք չորրորդ մահացու մեղաց վերայ :  
« Այլ եւ մեղայ եօթնիցս յանցանօք մահացու մեղօք ,  
հպարտութեամբ եւ մասամբք նորին , նախանձու եւ մա-  
սամբք նորին , բարկութեամբ եւ մասամբք նորին , ծռ-  
շուքեալք եւ մասաւմ նորին , եւ այլն : »

Ծուլութիւնն է՝ կանոնաւոր գործի եւ աշխատութեան  
դէմ զգացած կամ ցոյց սուած դժկամակութիւնն : Ինչ-  
պէս մարդոյս բոլոր պարտաւորութիւնք երկու գլխաւոր  
մասերու կը բաժանուին , հոգեւոր եւ մարմնաւոր , նոյն-  
պէս եւ պարտուց զանցառութիւն , որ է իսկ ծուլու-  
թիւն , երկու տեսակ է , հոգեւոր եւ մարմնաւոր :

Մարմնաւոր պարտուց զանցառութիւն կամ ծուլու-  
թիւն յաճախ յառաջ կուգայ հպարտութենէ , երբ մի մարդ  
ինքզինքն չափէ դուրս կը գերադասէ , աշխատութենէ վեր  
կը համարի , աշխատաւոր դասակարգին չի ուզեր պատկա-  
նիլ . կամ գործն ու աշխատութիւնը կ'արհամարհէ իբր  
անվայել իւր անձին ու աստիճանին : Մարմնաւոր պար-  
տուց մէջ ծոյլ մարդն՝ անպատճառ հոգեւոր պարտուց մէջ  
եւս ծոյլ լինելու է : Օրինակի համար , մեր ժողովրդեան  
մէկ մասին մէջ այն կարծիքը կը խորհէ՝ թէ մեր հոգեւորա-  
կանք ըստ մեծի մասին ծոյլ ու հեղզ մարդիկ են , վասն  
զի կը խորհն իւրեանց ժամանակ միայն աղօթիւք եւ հոգե-  
ւոր կը թութեամբք անցանել : Բայց ձեզ կը լստահացնեն  
որ հոգեւոր աշխատութիւն , հոգեւոր պարտաճանաչու-  
թիւն , շատ աւելի դժուարին է . շատ աւելի հաստատա-  
մտութիւն , յարատեւութիւն , ճիւղ ու աշխատութիւն կը  
պահանջէ քան զմարմնաւոր գործն . եւ հետեւաբար այն

մարդն որ մարմնով ծոյլ ու հեղգ է, լինի նա աշխարհական կամ հոգեւորական, հոգևով եւ ըստ հոգեւորին եւս առաւել ծոյլ ու հեղգ լինելու է :

Ինչպէս այլ ամենայն մեղաց, նոյնպէս եւ ծուլութեան վտանգներ ու վնասներ ամենաազգու կերպիւ, անմոռա՛նալի օրինակներով, նկարագրուած են մեզ համար 'ի Ս. Գիրքս :—

(1) Ծուլութիւնն աշխարհիս ամենէն ուժեղ ու զօրաւոր մարդը՝ կոյր գերի շինեց :

(2) Ծուլութիւնն աշխարհիս ամենէն քաղցրաբարոյ եւ երկիւղած մարդն՝ մարդասպան դարձոյց :

(3) Ծուլութիւնն աշխարհիս ամենէն իմաստուն մարդն ողորմելի կռապաշա փոխեց :

Ովեր՞ էին սոքա :— Սամսոն, Դաւիթ, Սողոմոն. երեք հիանալի եւ պանծալի անուններ. Սամսոնի չափ մարմնաւոր ոյժ, Դաւթի չափ բարեպաշտութիւն, Սողոմոնի չափ իմաստութիւն մեղմէ ո՞ր մէկը չէր ուզեր ունենալ : Բայց եւ այնպէս ծուլութեան չար ախան այս երից երեւելի արանց գերազանց շնորհներն աղարտեց, եւ զնոսա ստորնացոյց առաջի Աստուծոյ եւ մարդկան :

Սամսոն որ մարմնաւոր արտաքոյ կարգի մեծութեամբ եւ հսկայական զօրութեամբ ա՛ն ու սոսկում կը պատճառէր ամենայն փղշտացւոց. Սամսոն՝ որ զկորիւն առիւծու ձեղքեաց « իբրեւ զուլ մի այծեաց ». Սամսոն՝ որ իւր հայրենիքն ու հայրենակիցները պաշտպանելու առիթիւ ընդգէմ այլազգեաց՝ իշոյ ծնօտով հազար այր 'ի թշնամեաց սատակեաց. Սամսոն՝ որ Գազա քաղաքի վիթխարի զոները թափեց հանեց « հանդերձ սեմօքն եւ նգօքն եւ եզ 'ի վերայ ուտոց իւրոց, եւ եհան զնոսա 'ի գլուխ լերինն որ է հանդէպ Քերթոնի, եւ եզ զնոսա անդ ». այս աննման հսկայն Սամսոն ծուլութեան զոհ գնաց, երբ իւր դատաւորութեան պաշտօնը թողած՝ մարմնաւոր հեշտութեանց եւ հեղգութեան անձնատուր եղաւ, մի ողորմելի կնոջ յայտնեց իւր աստուածատուր զօրութեան գաղանիքն եւ մատնուեցաւ 'ի ձեռս այլազգեաց, որք այդ երբեմն հիանալի հսկայի աչքերը փորեցին եւ իբրեւ ամենայնտնեալ գերի բանտի մէջ երկաթի կապանօք կապուած ցորեն աղալ կուտային : Ահա՛ ծուլութեան պտուղն :

Իսկ Դաւիթ, այն որ « այր Աստուծոյ էր » : Դաւիթ՝

որ իւր հօր հօտի պանպանութեան միջոցին արջն ու առիւծն կըսպանանէր. Դաւիթ՝ որ իւրայելեան ազգն արհամարհող ու նախատող Գողիաթն պարստառքարով գետինն զլորեց, եւ իւր ազգէն մեծամեծ գովեստից արժանացաւ. Դաւիթ՝ որ բարքով ու զբացմամբ այնքան համեստ ու քաղցրաբարոյ էր, այնքան ներողամիտ էր, որ երբ իւր ռիւերիմ թշնամին, Սաուլ թագաւորն, երկիցս եւ երիցս իւր ձեռքն ինկաւ. ոչ թէ միայն չլնասեց, այլ առաւել եւս խոնարհութիւն եւ որդիական յարգաւք ցոյց տուաւ նմա. Դաւիթ՝ որ այնքան աստուածատէր եւ երկիւղած էր, եւ այն հրաշալւ սաղմոսներ շարագրած էր, զորս երեք չորս հազար սարկիներէ հետէ բազում ազգեր եւ այլազան կրօնից հետեւողք իսկ՝ իւրեանց աղօթից եւ հոգեւոր խոկմանց եւ խորհրդոց օրինակ եւ առաջնորդ ընտրած են. Դաւիթ՝ Իսրայէլի մարգարէ թագաւորն ծուլութեան զո՛հ գնաց, երբ փոխանակ, որպէս երբեմն, պատերազմի գաշալի վերայ իւր բազկի զօրութեամբն Իսրայէլի թշնամիները վանելու կամ առաջի Տապանակի Տեառն քնարիւ եւ սաղմոսերգութեամբ զԱստուած փառարանելու, պալատի հեշտութեանց եւ յլիութեանց անճնատուր եղած, անպործ աննպատակ իւր պալատի տանեաց վերայ կըշրջէր, անզգոյշ եւ անպարկեշտ հայեացք կըձգէ իւր զրացւոյն պարաէզին մէջ գտնուող մի կնոջ վերայ, եւ իբրեւ չարագոյն հետեւանք իւր մեղաց՝ այդ կնոջ անմեղ այրն սպանանել կուտայ: Ահաւասի՛կ ծուլութեան պժղալի արդիւնք:

ՉՍողոմոնն չմոռանամք: Սողոմոնն՝ որ գրեթէ 'ի յարպանդէ մօր իւրոյ իմաստութեամբ լցուած ծնաւ. Սողոմոնն՝ որ երբ երկոտասանամեայ իւր հօր թագաւորութիւնը ժառանգեց եւ Աստուած հարցուց նմա. « Ենդրեա դու քեզ խնդիր ինչ », ոչ այլ ինչ խնդրեց բայց եթէ իմաստութիւն. Սողոմոնն՝ որում Աստուած տուած էր հանճար եւ իմաստութիւն, եւ լայնութիւն սրտի իբրեւ զաւաղ առ եզր ծովու. այն որ աշխարհահոշակ դատաստան կըկատարէր, արգարութեան հիանալի վճիռներ կ'արձակէր. Սողոմոնն՝ որոյ մասին Տէրն մեր Յիսուս Քրիստոս կըլկայէ թէ՛ « Դշխոյն հարաւոյ եկն 'ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի », ինչպէս եւ ուրիշ ասեթիւ կըլիչէ զՍողոմոնն « յամենայն 'ի փառսն իւր »: Սողոմոնն՝ որոյ

բարեկամութիւն կը թախանձէին մերձակայ թագաւորը, եւ Եգիպտոսի անկղ թագաւորն իւր զուարն կուտար նմա 'ի կին, Սիզոնի եւ Տիւրոսի իշխանք առատածեան նուէրներով նորա սէրը շահել կ'աշխատէին. Սողոմոն՝ որ ցայն վայր չստեղծած փառք եւ ճոխութեամբ իւր ժամանակի ամենահռչակաւոր շէնքն՝ Երուսաղէմի սուրբ Տաւճարն կառոյց. Սողոմոն՝ որոյ իմաստութեան նշխարներ, Առակաց եւ Իմաստութեան գրքերն, մինչեւ ցայսօր մեր հիացում կը յարուցանեն եւ մեր երկրաւոր կենաց համար անգին խրատներ ու հրահանգներ կը մատակարարեն. այդ մեծ մարգն՝ երբ այլ եւս ինքզինքը ծուլութեան մասնեց, եւ արեւելեան պալատի հեշտութեանց եւ յղիութեանց անճնատուր եղաւ, դադարեց « զբարիս խորհել եւ խօսել եւ դործել », մոռացաւ իւր բոլոր իմաստուն խրատներ. եւ այն որ մեզ ուսոյց՝ « Ակիզբն իմաստութեան երկիւղ Տեառն », ինքնին փարատեց իւր սրտէն զերկիւղ Տեառն. եւ կը կարգամբ թէ « 'ի ժամանակի ծերութեանն ոչ էր սիրտ նորա կատարեալ ընդ Տեառն Աստուծոյ իւրոյ »: Միով բանիւ, Սողոմոն մոռացաւ իւր նախկին փառք եւ մեծութիւն. բազմաթիւ կուռքեր շինել տուաւ իւր օտարազգի կիներուն հաճելի լինելու համար, « եւ արկանէին խռնկա եւ զոհէին կոտոյ իւրեանց »: Ահա՛ ծուլութեան հետեւանքն:

Յիշեալ երեք օրինակներ, սիրելի ժողովուրդ, մեզ կ'ուսուցանեն որ ոչ թէ միայն մեր կենաց ներկայ վիճակի ու աստիճանի մէջ ծուլութենէ զգուշութեամբ խորշելու եմք, այլ եւ ոչ իսկ երբէք մտածելու եմք ապագային անգործ ու դատարկ նստիլ եւ վայելել, որ անկարելի է. վասն զի անգործութեան մէջ վայելք չկայ: Այն օրէն երբ Արարիչն մեր նախահարց ճակատին գրոշմեց՝ « քրքտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո », այն օրէն 'ի վեր հաստատուեցաւ, եւ մինչեւ ցայսօր անխուսափելի ճշմարտութիւն մի է, որ երկրաւոր կենաց քաղցրութիւնն ու մխիթարութիւնն աշխատութեան մէջ փնտռելու է. « Ի փոյթ՝ մի՛ վեհերոտք, հողով եռացէք, Տեառն ծառայեցէք, յուսով խնդացէք »: Որքա՛ն մարդիկ կան աշխարհիս վերայ որ սէրունական առակի անմիտ մեծատան պէս կը խորհին երբ կը հարստանան, կամ հարստանալու կը մօտենան եւ իրենք իրենց կը մտածեն. « Ձի՞ գործեցից, զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ. գիտեմ զինչ արարից »:

քակեցից զչտեմարանս իմ, եւ եւս մեծամեծս շինեցից, եւ անդր ժողովեցից զցորեան իմ: Եւ ասացից ցանձն իմ, Անձն, ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց, հանգիր, կեր, արբ եւ ուրախ լեր»: Այդպիսի մարդոց յոյս վասն ապագային՝ ծուլութիւնն է. բայց չգիտեն որ վերահաս մահն կարէ յանկարծակի այդ սնոտի յոյսն՝ ի դերեւ հանել: Կամ ընդ հակառակն, որքա՛ն մարդիկ կան որք հինգ յիմար կուսանաց պէս ծուլութեամբ եւ անհոգութեամբ կըննջեն փոխանակ ժամանակին ձէթ պատրաստելու իւրեանց լապտերաց համար: Չեն մտածեր որ ամառը կ'անցնի, աշուն կուգայ, ձմրան սառնամանիք պիտի յաջորդեն. նեղ օրուայ համար չափաւոր պաշար պատրաստելու է, որ միայն ծուլութենէ խոյս տալով եւ կանոնաւոր աշխատութեամբ կարելի է:

Արդարեւ ապրուստի եւ մարմնաւոր անհրաժեշտ պիտոյից պահանջն կըստիպէ զմարդն յաշխատասիրութիւն, որով միայն կարելի է հաց վաստակել եւ նիւթեղէն մարմնոյ առողջութեան եւ հանգստութեան պէտքերն հոգալ: Բայց հոգեւոր պիտոյից մասին ի՛նչքան ծուլութիւն կըտիրէ քրիստոնեայ ժողովրդոց մէջ: Հոգին սովամահ կըթողուն, մինչ մարմինն յղիացեալ նիւթական բարեօք կ'ապրի իրբ թէ հոգի չունի: Օրինակի համար, միայն մեր վերայ խօսինք, յաճախ կըպարծի մեր ժողովուրդ թէ մեր Եկեղեցին ժողովրդական է. բայց կըշուարթի թէ ի՛նչ կընչանակէ այդ ժողովրդական բառն, երբ կըտեսնեմ որ նոյն իսկ աշխարհային ուսմանց մէջ ըստ բաւականին զարգացած՝ եւ բարձրագոյն դասակարգէն համարուող անձանց մէջ ըստ մեծի մասին խոր տգիտութիւն կըտիրէ մեր Եկեղեցւոյ օրինաց եւ սահմանադրութեան, եկեղեցական պաշտամանց եւ արարողութեանց, վարդապետութեանց եւ Ս. Գրոց մասին: Օրինակի համար այս ժողովրդական կոչուած եւ համարուած Եկեղեցւոյ ժողովրդեան հարիւրին քանի՛սն գիտեն եւ կընասկանան որ զպիրք Աղուհաց կիրակէին յարութեան շարական կ'երգեն փոխանակ ըստ պատշաճի աւուր որչեալ պահոց շարական երգելու. կամ եկեղեցի յաճախող բարեպաշտ ժողովուրդէն քանի՛սն գիտեն կամ կրնան գուշակել թէ այս ինչ երգն կամ աղօթքն կամ մաղթանքն սաղմուսէն առնուած է թէ շարականէն կամ մաշտոցէն: Ամեն փոքր՝ ի շատ անկախօրէն հաց վաստակելու կարող հայ երիտասարդ՝ մի ժամացոյց ծոցն ունենալ անհրաժեշտ կը-

համարի , բայց քանի՞սն հատե մի ժամագիրք ունին իւրեանց գրպանում կամ 'ի տան . կամ ունեցողներէն քանի՞սն ծանօթ են այդ գրքոյի պարունակութեան եւ կրնան իւրեանց հոգւոյն վիճակն անոր նայելով քննել եւ ուղղել , ինչպէս որ ժամացոյցին նայելով իւրեանց ժամն ու ժամանակն ու երկրաւոր գործերը կըկարգադրեն : Ժամագիրքն յիշեցի , որովհետեւ մեր ազգի ամենէն ժողովրդական գիրքն է այդ . իսկ շարական , կամ մաշտոց , կամ տօնացոյց . կըվախնամ որ այդ գրքերը աչքով 'ի մօտոյ տեսնող զննողների եւ ձեռքով շօշափողների թիւն իսկ կարի սահմանափակ է , ուր մնաց նոցա պարունակութեան ծանօթ եղողներինն : Բայց այս ամենը , սիրելի ժողովուրդ , ծուլութեան արգիւնք եղող մեծագոյն շարեաց հանդէպ՝ չնչին թերութիւններ են : Քրիստոնէութեան հիմն եւ ոյժն հաւատն է , այն հաւատն որ օր ըստ օրէ մեր ժողովրդակրան Եկեղեցւոյ ժողովուրդէն կըսակասի : Ու՞ր է հաւատոյ այն գեղեցիկ պոռւղն , այն բարեպաշտութիւն որով ամեն հայ քրիստոնեայ որոշ ժամանակներ կ'առանձնանար իւր խուցն եւ Ս. Գրոց ընթերցմամբ եւ աղօթիւք կըսփոփուէր եւ կըզօրանար . եւ եթէ ժամանակն ու գիւրութիւնն եւս ունենար , ամեն առաւօտ եւ երեկոյ եկեղեցի երթալով՝ հասարակաց աղօթից եւս կըմասնակցէր : Ու՞ր են եւ քանի՞ հոգի մնացած են այն հայրերէն որք արիութիւնն ունին երեկոներն իւրեանց ընտանիք իւրեանց շուրջ հաւաքել եւ միասին այդ ժողովրդական Եկեղեցւոյ աղօթքներէն մի քանիսն արտասանել , այդ ժողովրդական Եկեղեցւոյ սովորութիւններն մեկնել եւ հասկացնել իւրեանց զաւակաց , կամ կիրակի օրերն մի քանի ժամ Ս. Գրոց ընթերցմամբ անցնեն , շարական եւ սաղմոս երգելով՝ հոգւով զուարթանան եւ պայծառանան : Գնացէք հայաբնակ մեծ քաղաքներ եւ տեսէք թէ ի՞նչպէս Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակունք տէրունական աւուրց մէջ սրճաբաններ եւ դինեառուներ հաւաքուած , թուղթ ու նատր խաղալէ , չուայտութեամբ եւ արբեցութեամբ ժամանակին շարաչարվատնելէ ամենեւին ձանձրոյթ կամ ծուլութիւն չեն զգար : Ամեն կիրակի Ս. Պատարագ կըմատուցուի հայ եկեղեցեաց մէջ եւ ամեն կիրակի կըբաւիրուի այս եկեղեցատէր ժողովուրդ . « Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք » : Սակայն ի՞նչքան հայեր կըգանուին յիշեալ հայաբնակ քաղաքաց մէջ , որ տարիներէ 'ի

վեր, պասնեակ տարիներով, այդ հրաւերին խուշ ականջ ընծայած են եւ կընծայեն, վասն զի հոգեւոր ծուլութեամբ վարակուած են :

Ուրեմն ազօթեմք որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ողորմեացի իւր սուրբ Հօտին եւ Եկեղեցւոյն, եւ զարթուցէ զմանկունս նորա 'ի հաւատս ճշմարիտս, եւ փարատեցէ 'ի նոցանէ զմահացու ախտ հոգեւոր եւ մարմնաւոր ծուլութեան. Ամէն :

## ԱՌԱՔԵԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ

Հայր Ալիշան Բագրավայի Յուլիսի թուոյն մէջ Հայոց առաջին լուսաւորչաց պատմութիւնն այսպէս կը քննէ . —

« Յետ այսմ ամենայնի, չորրորդ խորհրդածութիւն մի եւս գրգէ զժիտս . թէ, միանգամայն աչքէ անցընելով ինչ որ տեսանք Առաքելոց գալըստեամբ ի Հայս, կըրնա՞յ մեր եկեղեցին այլ Առաքելախաւ կոչուիլ : Այս բանն կամ իմաստն՝ կըրնայ աւելի կամ պակաս ընդարձակ իմացուիլ . ո՞ր չափն Հայոց եկեղեցւոյս պատշաճի : — Թողումք վճռել աստուածաբանից, արդարեւ աստուածաբանից : Շատանամք առ այժմ Առաքելաշնորհ ճանչնալով զայն, անգամ մի եւս խոստովանիլ, թէ, « Ոչ այսպէս արար ամենայն ազգաց՝ Տէր », եւ ջերմ շնորհակալութեամբ երկըրպագել 'Քրիստոսի » :

Աւելորդ է ասել որ Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ զաւակունք ամենեւին տարակոյս չունին որ իւրեանց Եկեղեցին բառի բովանդակ եւ իսկական իմաստովն ու նշանակութեամբն Առաքելախաւն է : Մենք կը կարծէինք որ արտաքոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ գանուող անձինք, յիս ուսումնասիրելու Առաքելոց գործունէութիւն 'ի Հայս այնպէս ինչպէս որ վերջերս ուսումնասիրուած է, պիտի այն համոզումն ստանային ինչ որ իւրաքանչիւր լուսաւորչածին հայ ունի, երբ ձեռնամած կ'արտասանէ, « Հաւատալի եւ 'ի մի խայն ընդհանրախաւ եւ առաքելախաւ սուրբ Եկեղեցի » : Փա՛ռք Աստուծոյ որ մեր ժողովուրդը, առանց աստուածաբանից նրբազնին որոշմանց եւ բայտարութեանց կարօտ լինելու, գիտէ իւր հաւատքն, կը ճանաչէ

իւր Եկեղեցին, զոր կրգաւանի եւ՝ Առաքելական եւ՝ Առաքելաշնորհ: Եթէ խնդիրն առաքելական սքոռոյ վերայ լինէր, յայնժամ կարելի էր վիճելի կէտեր տեսնել, եւ «բառի առաւել կամ պակաս ընդարձակ իմաստ» ընդունել, օրինակի համար, 'ի մէջ Ս. Երուսաղէմի եւ այլ առնայն առաքելական կոչուած աթոռոյ: Բայց արդեօք ի՞նչ իմաստով կարէ մի եկեղեցի առաքելական չհամարուիլ, որ իւր հանրային աղօթից մէջ եւ հանգանակովը ամենապարզ կերպիւ կրգաւանի առաքելական սուրբ Եկեղեցի: Եթէ այսու հանդերձ մեր ընթերցողք աստուածաբանական այս որոշումն եւս կ'ուզեն ըմբռնել, հետեւեալ հաստուածք կրքաղեմք մի քանի տարւով յառաջ ի Ս. Երուսաղէմ տպագրեալ մի գրքոյկէ,\* յորում հեղինակն չորրորդ գլխոյն մէջ՝ զինի առաքելական դարու նուիրապետութեան զարգացման այլ եւ այլ աստիճանները բացատրելու, կը յաւելու.

«Մի եւնոյն կերպիւ քահանայական եւ եպիսկոպոսական աստիճաններ հետզհետէ Առաքելութենէ բաժանեալ՝ հաստատուեցան, մանաւանդ երբ մէկ կողմէ հաւատացելոյ թիւը արագ արագ կը մեծնար եւ միւս կողմէ Առաքելոյ կենաց վախճանը կը մոտենար եւ Եկեղեցւոյ սահմանադրութեան կատարելապէս հաստատուիլը անհրաժեշտ կարիք մը կը դառնար: Առաքեալք ոչ թէ միայն Եկեղեցւոյ համայն նուիրապետութեան բոլոր իրաւունքներն ու շնորհներն ունէին, այլ 'ի շնորհս Առաքելութեան մի ուրիշ իշխանութիւն եւս ունէին որ հիմա այլ եւս չկայ. ոչ ալ նորա գոյութեան պէտք կայ, եւ որ առաքելական աստիճանի առանձին յատկանիշն էր, եւ զայն մեր ներկայ եպիսկոպոսութենէն կը զատէր: Եկեղեցւոյ հիմնարկութեան եւ հաստատութեան իշխանութիւնը նոցա յանձնուած էր, եւ ինչպէս մնացեալ ուրիշ սահմանադրութիւններն, նոյնպէս ալ նուիրապետութեան աստիճանաց բաժանումն ու որոշումն անոնց ձեռքը թողուած էր, որ ըստ պիտոյից եւ յարմարութեան բաժանեն եւ որոշեն: Այս կերպով իրենց պաշտօնն աւելի բարձր էր քան թէ ներկայ Եկեղեցւոյ նուիրապետութեան բոլոր աստիճաններ 'ի միասին. եւ թէպէտ իւրաքանչիւր մէկը կարող էր պարզ եպիսկոպոսի պէս մի յատուկ քաղաքի վերակացութեամբ շատանալ, բայց իւ-

(\* ) Տես ՆՈՒՒՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ, որ իբրեւ յաւելուած Ս. Երուսաղէմի 1889ի Օրացոյցի մէջ հրատարակուած է:

րեանց պաշտօնն իբրև հիմնադիրք Եկեղեցւոյ՝ կը պահանջէր որ շարունակ ճանապարհորդելով եւ Քրիստոսի արքայութեան սերմերը տարածելով՝ իբր թէ ամբողջ աշխարհն արշաւել, առանց մէկ տեղ հաստատուն կերպիւ մնալու: Այս կանոնին միայն մէկ բացառութիւն կար, եւ այդ էր Յակովբոս Տեառնեղբայր կոչեցեալ Առաքեալն, որ յատուկ առաքելական որոշմամբ եպիսկոպոս կամ մնայուն վերատեսուչ կարգուեցաւ Երուսաղէմ քաղաքի, որ քրիստոնէութեան խանձարուրն եւ Եկեղեցւոյ կեդրոնն էր: Առաքեալք պէտք չգային Երուսաղէմի մէջ իրենցմէ մին թողուլ, որ պաշտօն ունենայ ընդհանուր Եկեղեցւոյ զեկը արտաքուստ կառավարել, եւ զժուարին զէպքերու եւ խնդիրներու մէջ՝ համաձայնութեան միջոցներու ձեւնարկել, եւ միանգամայն իւրաքանչիւր Առաքելոյ ուղեւորութեանց եւ քարոզութեանց արդիւնքը տեղեկանալով՝ մնացեալներուն հաղորդել: Ասոր համար կը տեսնենք որ Առաքեալք միշտ իւրեանց աւետարանական ուղեւորութիւններէն ժամանակ առ ժամանակ կը դառնան յԵրուսաղէմ եւ իբր թէ համար կուտան իւրեանց գործոց եւ քարոզութեանց. եւ եթէ վիճաբանութեան զժուարին խնդիրներու հանդիպէին՝ սովորաբար բոլոր Առաքեալները հոն կոչելով ժողովոյ խորհրդակցութեամբ համաձայնութիւն կը գոյացնէին. եւ կը տեսնենք նաեւ որ Առաքեալք առանձին կերպով խնամ կը տանին Երուսաղէմի եկեղեցւոյ պայծառութեան եւ աղքատաց օգնութեան: Այս պատճառաց համար, պէտք եղաւ զՅակովբոս Երուսաղէմի մէջ իբրև եպիսկոպոս հաստատել, եւ եթէ Քրիստոսի Զինուորեալ Եկեղեցւոյ մէջ գլխաւորութիւն կար, Յակովբոսին կը վերաբերի այդ, ինչպէս մեր շարականն ալ կ'ըսէ. « Սա եղև գլուխ Առաքելոց սրբոց ». եւ իսկապէս եւ բուն բառի նշանակութեամբն Երուսաղէմէ միակ Առաքելական աթոռն, որոյ առաջին աթոռակալն Սուրբ Գրոց անխարզախ եւ աներկբայելի վկայութեամբ՝ Առաքեալ մի էր, մինչդեռ մնացեալ ուրիշ աթոռք որք առաքելական կը կոչուին՝ Առաքելոյ մը քարոզութեամբն հաստատուած լինելու համար է, եւ ոչ թէ քանզի Առաքեալ մը առաջին եպիսկոպոս կամ զանակալ եղած է նոյն աթոռոյ »:

Նախընթաց հատուածէն կը տեսնուի որ մինչդեռ ներ-

կայ եպիսկոպոսական աթոռք առաւել կամ նուազ իմաստով առաքելական կրնան կոչուիլ, — եւ ինչ իմաստով եւս եպիսկոպոսական աթոռք առաքելական կամ առաքելաշնորհ կոչուին, շատ տարբերութիւն չունի ոչ խնդրոյ տակ եղող աթոռոյն համար եւ ոչ այն աթոռոյն եպիսկոպոսի համար որ արդէն ունի յինքեան առաքելական հաջորդութեան շնորհն, — բայց աններելի է որ եւ է կերպիւ կամ իմաստով զլանալ Առաքելական կոչումն որեւէ մի եկեղեցւոյ որ Սրբազան Առաքելոց քարոզութեամբ հաստատուած է, եւ մինչեւ իսկ եթէ մի Առաքել սկզբնական հիմնադիրը չըլինի այդ եկեղեցւոյ, այլ առաքելական աւանդութիւնն ուրիշ ազգի կամ եկեղեցւոյ միջոցաւ ստացած լինի, — ինչպէս, օրինակի համար, Վրաց եւ Ալուանից եկեղեցիք Հայոց եկեղեցւոյ միջոցաւ, — դարձեալ առաքելական եկեղեցի համարուելու է. ուր մնաց երբ, Քրիստոսի առաքելոց կէսէն աւելին առաջին լուսաւորիչք եւ հիմնադիրք եղած են այդ եկեղեցւոյ, ինչպէս են Հայոց եկեղեցւոյ առաջին լուսաւորիչք: Մի ազգային եկեղեցի կը դադարի վաւերական եկեղեցի լինելէ, երբ որ եւ է իմաստով նորա առաքելականութիւնը կասկածի ենթարկուի, վասն զի Առաքելք եղած են Ս. Աւետարանի աւանդողք, առաքելական յաջորդութիւնն է որով նոր Ուխտի շնորհաց աստուածային աւանդն կը մշտնջենաւորի ՚ի սուրբ Եկեղեցւոջ. եւ եթէ Առաքելական բառն իւր կատարեալ իմաստովն մեր Եկեղեցւոյն չը պատկանէր, մեր սրբազան պաշտամանց մէջ այնքան անգամ գործ չէր ածուեր, եւ պէտք չը պիտի մնար քսաներորդ դարու սկիզբն մեզ հաւատացնել փորձել թէ մեր Եկեղեցին Առաքելական չէ, այլ միայն առաքելաշնորհ:

### ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ

[ Սոյն վերնագրի ներքոյ դրուած փոքրիկ յօդուածներն նպատակ ունին քրիստոսի վարուց վերայ մի կարգ պարզ դասերի ծրագրին ներկայացնել յորոցմ, կրօնւոյցք կարեն օգտուիլ. աւելնելով ցերեւս ուրիշ ինչ որ իւրաքանչիւր պարագային յարմար երեւի: Ոչ ինչ նուազ օգտակար կարեն լինել նաեւ քարոզչաց, որք իբրեւ ն սխալարարատուցին տոյն կամ տոյն լիսի ծրագրաց վերայ ցերեւս յօժարին իւրեանց քարոզնր դասաւորել: ]

### ՄՆՈՒՆԴ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Քրիստոսի ծննդեան պարագա ք պատմուած են յաւետարան սգիրս Մատթէոսի և Ղուկասու: Մատկոս և Յովհաննէս փրկիչ մանկուածեան անցքեր չեն աւանդեր:

Ինչպէս նախընթաց դասէն ատանք, Քրիստոսի ծնունդն կանխատեսուած և պատրաստուած էր. բայց իրական կատարումն խոնարհութեամբ և անչքութեան մէջ եղաւ:

Եթէ մեր փրկիչն իբրև արքայորդի կամ իշխանուղն ծնած լինէր. հաւանորէն հրէից կողմէ շատ լաւ ընդունելութիւն պիտի դտնէր. բայց Աստուծոյ յաւիտենական կամք ալլապէս տնօրինած էր:

ԱԿԵՏՈՒՄ:—Գարբիէլ հրեշտակ Սուրբ Կուսին երկու բան աւետեց. — 1. Թէ ինքն Մարիամ մի Որդի պիտի ծնանի:

2. Թէ Յովհաննէս Մկրտիչը պիտի ծնուի:

Մեր Եկեղեցւոյ անշարժ տօներէն մին է Աւետուած Ս. Աստուածածնի և կրկատարուի 7 Ապրիլի:

Աւետման պատմութիւնը կարգա Ղուկ. Ա 26-38: Յիշէ

- (1) Թէ ինչքան տարօրինակ էր հրեշտակի բերած պատգամն
- (2) Ս. Կուսին կատարեալ հաւատքն.
- (3) Նորա պատրաստականութիւն. — «Ահաւասիկ կամ աղաչին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քուսմ»:
- (4) Մեծացուցէն (46-55)—և կարգա երգ Աննայի, Ա. Թագ. Բ 1-10:

Ս. Կոյսն, որ Դաւթի ցեղէն էր. նշանուած նազարէթցի հիւսնադորձ Յովսէփի հետ, որ նմանապէս Դաւթի ցեղէն էր: Երբ յայտնուեցաւ որ Յիսուս պիտի ծնուէր, Յովսէփ, որ իսկզբան անսեղեակ էր աւետման պարագայից, ուղեց ծածկաբար բաժանուիլ Ս. Կուսէն. բայց երբ եղելութիւնը հասկացաւ աստուածային տեսլեամբ, ալլ եւս շարձակեց: Մատթ. Ա 18-25:

Երեք բան յայտնուեցաւ Յովսէփին այդ տեսլամբն.

- (1) Թէ մանուկը պիտի ծնանէր «ի Հոգւոյն սրբոյ», սյոնիքն, Որդի Աստուծոյ էր:
- (2) Թէ նորա անունը Յիսուս (Յիսուս) պիտի կոչուէր:
- (3) Թէ նա իւր ժողովրդեան փրկիչը լինելու ստհմանեալ էր:

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՐԱԳԱՅՔ . —

1. Մարդարեւթիւնը կը յիշէ Բեթլէհէմ (տուն հացի) իբրև տեղի ծննդեան (Մէքիէ, է 2). այլ որովհետև Մարիամ 'ի Նազարէթ կը բնակէր, Աստուած այնպէս տնօրինեց որ Ս. Կոյսն Բեթլէհէմ գնաց: Հռովմայ կայսրն հրամայած էր իւր պետութեան մարդահամարը պատրաստել. որով իւրաքանչիւր հրեայ ազգային սովորութեան համեմատ իւր տոհմային քաղաքին մէջ պիտի արձանագրուէր. ուստի Մարիամ և Յովսէփ 'ի քաղաք Դաւթի, որ է Բեթլէհէմ, գնացին:

ԽՐԱՍԱԿԱՆ (1) Աստուած այնպէս կը նախախնամէ աշխարհին իրաց և անցից վերայ, որ իւր սուրբ նպատակ կատարուի:

(2) Ուստի պարտիմք զմեզ յանձնել 'ի ձեռս Աստուծոյ և խոնարհել նորա օրհնեալ կամաց:

« Աստուած իմ, որ շնորհ զձեռս քո, և ընդ զամենայն արածս սորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ, դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչ և յաւիտեան »:

2. Իջևանին մէջ Քրիստոսի համար տեղ չկար, քոքորիկ դիւղաքաղաքն աշխարհագրի առթիւ չափէ դուրս բազմութեամբ լցուած լինելու պատճառաւ: Ուստի քարայրի մուռն եղաւ նորածին փրկչի օրորոցն. այսու հանդերձ փրկչի բարձր պաշտօնը որ և է կերպիւ չվնասուեցաւ. պատիւը չկորսուեցաւ:

ԽՐԱՍԱԿԱՆ (1) Եթէ իբրև Աստուծոյ զաւակունք մեզ յանձնեալ դործն խճի մտօք և անթերի կատարեմք, արտաքին պարագայք նշանակութիւն չունին:

(2) Չպիտի անարգենք խոնարհ վիճակի մէջ գըտնուողներ. « Զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ »:

3. Այցելութիւն հովուաց: Որքան խոնարհ ու աղքատիկ պարագայից ներքոյ ծնաւ փրկիչն, դարձեալ արքայական փառօք 'ի ձեռն հրեշտակաց յայտնուեցաւ այդ ծնունդ Բեթլէհէմի դաշտին մէջ օթեվանող հովուաց: Նախ մի հրեշտակ երևեցաւ և աւետեց. « Զի ծնաւ ձեզ փրկիչ, որ է օծեալ տէր, 'ի քաղաքի Դաւթի »: Ապա երկնաւոր զօրաց բազմութիւնը երգեց, « Փառք 'ի բարձունս Աստուծոյ »:

Ս. Եկեղեցին կ'ուսուցանէ թէ Որդին Աստուծոյ մարդացաւ, այսինքն, մարդկային մարմին առաւ:

- Յիշե՛լ (1) Հօր Աստուծոյ սէրն 'ի մարդեղութեան. Յովհ, Դ 16,  
(2) Որդւոյն Աստուծոյ սէրն որով յանձն առաւ ըստ  
կամաց Հօր մարդանալ՝ զմեզ փրկելու համար.  
Կաղ. Բ 20 .

Ս. Եկեղեցին մարդեղութեան յիշատակը կը տօնէ 'ի վեց Յունուարի, յորում առուր, ըստ կարծեաց հարց հայոց, զկնի երեսուն ամաց, կատարեցաւ մկրտութիւնն 'ի Յորդանան:

ԽՐԱՏԱԿԱՆ (1) Աստուծոյ փառք տանք որ իւր Որդին մեզ պարգեւեց .

- (2) Յիշե՛նք այն շնորհներ, որոց արժանացած եմք 'ի ձեռն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ո . ՔԸ . Ղ .

## ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ ՄԱՐԿՈՍԻ ԱՐԵՒԵԼԻՈՍԻ

ՀԱԻԱՔԵԱՅ ԱՐԺ . ՏԵՐ ԱԻԵՏԻՍ Վ . ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ :

(Շարունակութիւն, տես էջ 96 .)

ԾՈՒԼՈՒԹԻՒՆ .

Լճացած ու հոտած ջուրը այնչափ չապականեր քաղաքի մը օդը, ինչպէս դատարկակեաց ժողովուրդ մը՝ իր բարձր:

Չկայ մոլութիւն մը, որ տղայոց սրտերնուսն մէջ ապականութեան կրակն այնչափ հրահրէ, ինչպէս դատարկակեցութիւնը:

Չկայ մոլութիւն մը, որ այնչափ խռովութիւններ ու ապստամբութիւններ հանէ, ինչպէս պարապ կենալն՝ եւ ուրիշներուն քրտինքի վաստակով ապրելը:

Թագաւոր մը՝ որ իր հողէն կ'աքսորէ դատարկ մարդիկները, կրնայ պարծիլ՝ որ ամեն մոլութիւններն աքսորած ըլլայ:

Ամեն մարդ իր ծուլութիւնն ու անհոգութիւնը թող մեղագրէ, ո՛չ թէ բնութիւնը:

Չեմ ուրանար՝ որ բնութիւնն իս տկար է, բայց այս տկարութիւնը՝ աւելի ծուլութեանէն յառաջ կուգայ:

Դատարկակեցութիւնը թշնամի մընէ, որ ամեն մոլութիւններու եւ ախտերու գոները կը բանայ:

Կարճ ժամանակուան մէջ՝ բոլոր գէշ բաներն ալ կը

սորվինք, եւ լաւ բաներու համար միայն երկար ժամանակ կը փնտռենք :

**ՉԱՐ ՄԱՐԴԻ .**

Որոնք որ յանցաւոր են, անոնք նոյն յանցանքն ուրիշներուն վրայ աւելի անողորմ կը դատեն, ու աւելի խիստ վճիռ կուտան :

Անիրաւ հրամանը մարդու սիրտը կըխտացնէ :

Աւելի վնասակար է կեղծ խաղաղութիւնը քան զյայտնի պատերազմը : — Չեն պակսիր արքունեաց մէջ մարդիկ, որոնք թագաւորին եկամուտները աւելցնելու, տուրքերը ծանրացնելու եւ փոխ պահանջելու կերպը ցուցնեն, բայց մէկը չկայ, որ ըսէ թէ ի՛նչ կերպով թագաւորն իր հպատակներուն սիրտը կընայ վասակիլ :

Չարիք մը չկայ՝ որ այնպէս կործանէ զհասարակապետութիւնը, ինչպէս դատաւոր մը՝ որ կըշիռն ուղիղ չըռներ :

Անկից այլանդակ ու գայթակղելի բան չկայ, ինչպէս ազոց վարպետի կը մոլութիւնը :

Ամեն գէշ գործքերնուս պատիժը պիտի քաշենք, ու ամեն բարի գործքերնուս վարձքը պիտի առնենք :

Մարդուս ամենամեծ աղքատութիւնը՝ ճշմարտութենէն զուրկ ըլլալն է :

Մէկ մասնութեամբ՝ մարդս իր բոլոր առաջուան ըրած ծառայութիւնները կը կորսնցնէ :

**ՊԱՏԻԻ**

Կը տեսնենք՝ որ շատերն անպատիւ կը մնան՝ պատիւ փնտռելնուն համար, ու շատերը պատուոյ կը հասնին՝ պատիւէն փախչելնուն համար :

Ճշմարիտ պատիւն՝ իշխանութիւն ունենալուն վրայ չէ, այլ բարի վարք ունենալուն :

**ԹԱԳԱՆՈՐՆ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ**

Երանի՛ հասարակապետութեան, ուր որ ժողովուրդը հնազանդ է թագաւորին, ու թագաւորը կը սիրէ զժողովուրդը, վասն զի թագաւորին քաղցր սէրն է՝ որ զժողովուրդ հնազանդ կ'ընէ. ու ժողովրդեան հնազանդութիւն է, որ թագաւորին սէրը կ'աւելցնէ :

Հնազանդեալներուն սէրը՝ թագաւորներու ապահովութիւնն է, եւ կոստերաց օրէնսգրութիւնը խորհրդարանի պատիւն է :

**ՍԷՐ**

Սէրն ուրիշ բանով չհատուցուիր, բայց միայն սիրով :

Սրտանց կը սիրենք ա՛յն բարեքը՝ զոր մեր քրտինքովը վաստկած ենք :

### ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

Ճար չեղած բանին ճարը՝ համբերելն է :

### ԳԻՆՈՎՈՒԹԻՒՆ

Գինւոյ առատութիւն գինովները կը շատցնէ :

### ԱՇԽԱՐՀՔ

Ո՛վ պիղծ աշխարհ՝ գիտե՛ս, որ կը ճանչնամ քու ի՛նչ ըլլալդ. գերեզման մըն ես՝ մեռելներուն համար. բանա մըն ես՝ ապրողներուն համար, մոլութեանց խանութ մըն ես, առաքինեաց՝ պատիժ. անցածը՝ մոռցնող, ներկային՝ թշնամի, մեծ բաներն՝ աւրող, փոքրերը՝ տակնուվրայ ընող, պանդուխտներուն՝ իշխան, պարապ պտրտողներուն՝ հրապարակ, լաւերը՝ կործանող, գէշերը՝ զրգռող, ու զաւ մենքը խաբող ես :

Մի՛ վստահիր ամենեւին աշխարհիս յաջողութեանը. վասն զի միշտ կարապետ է ձախորգութեանը :

Ուզեցի կենացս մէջ աշխարհքիս ամեն մոլութիւնները փորձել, թէ արգեո՛ք մարդս անոնցմով կրնա՞յ գոհ ըլլալ. բայց տեսայ՝ որ ո՛րչափ ուտեմ, աւելի կ'անոթեմ, ո՛րչափ խմեմ, աւելի կըծարաւնամ. ո՛րչափ զուարճանամ, աւելի զուարճանալ կ'ուզեմ. ո՛րչափ հարստանամ, աւելի կ'ազահանամ, ո՛րչափ փրճուեմ, աւելի քիչ կ'երեւնայ գտածս :

Այս աշխարհիս խարխիւներն աւազի վրայ հիմնուած են, որոնց վրայ կը յենուն ունայնասէր մարդիկ : Այս շինուածքները ո՛րչափ աւելի մեծաչէն ու բարձր ըլլան, քիչ մը հողմով կը կործանին. ու ձախորգութեան թեթեւ անձրեւով մը կը քակուին :

Աշխարհքը պատրուակեալ ճշմարտութեան մը ներքեւ՝ հազար սուտերով զմեզ կը բեռնաւորէ. օրուան մը շողորթ հեշտութեան հետ՝ հազար արտմութիւններ կը խառնէ. որոնց որ աւելի սէր կըցուցնէ, զանոնք աւելի շատ կը խաբէ. եւ կը ջանայ մե՞ծ վնասներ տալ անոնց, որ խնդալով իրեն կըծառայեն :





